

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Նոյեմբերի 26-ին Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագի ընթացքում, ձեռամբ թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, քահանայական սրբազան ձեռնադրություն և օծում ստացան Վալերիկ սարկավագ Մարտիրոսյանը և Հովիկ սարկավագ Հայրապետյանը։

Նոյեմբերի 25-ին, երեկոյան ժամերգության ընթացքում, տեղի ունեցավ «Ցերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիլակությամբ Տ. Բարսեղ քահանա Ղազարյանի, որը վկայեց նորընծաների հոգեկան ու մտավոր պատրաստվածության ու արժանիքների մասին։ Ապա նորընծաները խոստացան «յանձն առնուլ եւ կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն եւ հայրապետացն եւ կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ եւ առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ Հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»։

Կոչման արարողության ավարտին նորընծաները հրապարակորեն արտասանեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»-ը՝ ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի։

Հաջորդ օրը, հընթացս ս. պատարագի, տեղի ունեցավ նորընծաների ձեռնադրությունը։ Պատարագիչ Սրբազան Հայրը սրբալուսյա մեռոնով օծեց նորընծաների ճակատն ու ձեռքերը՝ վերանվանելով նրանց նոր անուններով՝ Վալերիկ սարկավագ Մարտիրոսյանը անվանակոչվեց Տ. Մինաս քահանա, Հովիկ սարկավագ Հայրապետյանը՝ Տ. Ծաղիկ քահանա։ Ս. պատարագին ներկա էր Ծաղիկ արքեպիսկոպոս Աճեմ անը, ի պատիվ որի էլ նորընծաներից վերջինս ստացավ նրա անունը։

Այնուհետև Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը նորընծաներին տվեց «զսկիհ եւ զմաղզմայն», ի նշան պատարագ մատուցելու իշխանության։ Նորընծաները, դառնալով ժողովրդին, տվեցին իրենց առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»։

Ապա Գարեգին Սրբազանը շնորհավորական ու խրախուսական քարոզով դիմեց նորընծաներին՝ մաղթելով նրանց հավատքի ուժ և կարողություն՝ գործելու ի փառս Աստուծո, ի պայծառություն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո։

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ